

ՀՈՎԻՇ ԵԽ ՃԻՄԿԱՆ ԽՈՐՀՈՒԹ
Ս. ԱՍՏՈՒԱԺԱԾԻՆ ՅԱՅԱՍՏԱՆԵԱՅՑՑ

ԵԿԵՂԵՑԻՈՑ

- ՊԲՀ. ԽՄՀ ՀՅԵ
ԱԱ



ՅՈՒՆԻԼԱՐ 10-1966

PASTOR and PARISH COUNCIL
St. Mary's Armenian Church

417 14th AVENUE
IRVINGTON, N. J.
ESeex 3-2329

ԳԵՐԱՉՆՈՐԸ.

Տէր Սիոն Սրբզ. Արքեպիսկ. Մանուկեան
Բարեխնամ Առաջնորդ Հայթ. Ամերիկայի Եւ^ւ
Նախագահ Թեմական Կեդրոնական Խորհրդոյ.

Ի ՆԻ ԾՈՐՔ .

ՍՐԲԱԳԱՆ ՀԱՅՐ.

Հաճոյքով կուգանք ՄԵՂԵԿԱԳՆԵԼ ԶԵՐԴ ՍՐԲԱԳՆՈՒԹԵԱՆ ԹԷ, ՅՈՒՆՎ. 24 -
1965 -ին, ԶԵՐ Բարձր Նախագահութեան տակ գումարուած ԵԿԵՂԵՑԻՈՆ
Տարեկան Ծխական ժողովի փափաքին ու որոշման համաձայն, ԵԿԵՂԵՑԻՈՆ
Շինութեան Յանձնախումբը գնած է 3.2 արօտավայր Հող մը, 627 ՄԱԼԻՆԻ
ԱԼՔՉՈՆԹ ԱԽԸՆԻ, ՈՒԽՄ ՕՐԵՆՑ, Ն. Ճ., որակս Նոր ԵԿԵՂԵՑԻՈՆ շինու-
թեան վայր։ Նոր Հողին վրայ կայ քարաշէն տուն մը որ կոնայ գոր-
ծածուիլ որպէս Հոգուատուն։ Սոյն կալուածը գնուած է 47,492.75
տուարի որուն 22,000-ը արդէն իսկ վճարուած է։

Նախապէս ԶԵՐԴ ՍՐԲԱԳՆՈՒԹԵԱՆ ՀԵՏ ՈՒՆԵցած ՄԵՐ ՀԵՌԱՋԱՅՆԱՅԻՆ ԽՈՍԿ-
ՑՈՒԹԵԱՆ ՎՐԱՅ ՀԻՄՆՈՒԱԾ, ԶԵՐ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹԵԱՆ ՎՐԱՅ Սպրիլ 24 - 1966 թ
ընտրեցինք Հողօրչնէքի օր։ Այս առթիւ մեր փափաքն է որ այդ օր
բարեհաճիք մեզ ՀԵՏ ըլլալ Ս. Պատարագ Մատուցանելու, բանին կենաց
քարոզութեամբ միմթարելու մեր ժողովուրդը նաեւ ՕՐՀՆԵԼՈՒ մեր նոր
Հողը։ Հողօրչնէքն վերջ քաղաքիս մէկ պանդոկին մէջ պիտի տրուի
ճաշկերոյթ այս առթիւ։ Կը խնդրենք որ Նախագահէք այս ՃԵՌԱՐԿԻՆ։

Սպասելով Զերդ Սրբազնութեան դրական պատասխանին եւ հաստատագրին

Մատչիմ ի համբոյր Զեր Ա. Աջոյն

Զեր Խոնարհ ծառան

Ժամանակ Ջեյ. Գուշտակ

ՍՍՍՀ ՔՀՆ. ԳՈՒՅՈՒՆԻԱՆ

Հոգեւոր Հովհաննես

Թիւ 12287
Փետրուար 8, 1966

Արժանաշնորհ
Տ. Սամբռէ Քնսյ. Գուգույան
Հոգեւոր Հովիտ Ա. Աստուածածին Եկեղեցքոյ
Ըրմինկթըն.

Միքելի Տէր Սամբռէ,

Ի պատասխան Ձեր Ցունուար 26 թուակիր Նամակին, այսու, կ'ուզեմ
հաստատել թէ Հայաստանեայց Եկեղեցին կը դաւանի՝ "ի մի մկրտութիւն"
,,, հետեւարար, ճպիսկոպոսական Եկեղեցիէն Հայաստանեայց Եկեղեցին վե-
րադարձող մը պէտք է դրոշմել միայն, եթէ չէ դրոշմուած, բանի որ ա-
նոնք մկրտութեան եւ դրոշմի խորհուրդը միասին չեն կատարեր: Խնչպէս
Եկեղեցական համագումագինմարներուն մէջ յանձնարարած ենք մեր թեմի
Հոգեւոր Հովիւներուն, նոյնը կը յանձնարաբենք 2եզի: այս առթիւ:

Միամբ Տիրաւանդ սիրոյ ողջունիւ
Աղօթարար

Սիևն ԱՐԺՈՒՈՒԱՌՈՒ
Առաջնորդ Հայոց Ամերիկայի
Եւ Կանադայի

ՀՈՎԻՆ ԵԽ ԺԻՇԱԿԱՆ ԽՈՐՀՈՒԹ

Ս. ԱՄՏՈՒԱՇԱՁԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ

ԵԿԵՂԵՅԻՑ



PASTOR and PARISH COUNCIL
St. Mary's Armenian Church

417 14th AVENUE
IRVINGTON, N.J.
ESsex 3-2329

ՅՈՒՆՈՒԱՐ 26 - 1966

ԳԵՐԵԸ.

Տ. ՍԻՈՆ Ս. ԱՐՔԾՎԻՍԿ. Մանօքէկեան

Բարեխնամ Առաջնորդ Հայց. Ամերիկայի.

ՆԻւ ծորք .

Արբա. Հայր.

Մեր ծխականներէն Պըն. Արթչօր Դիւանեանի Տիկ.ը Եւ երկու զաւակները մկո-
տուած Եւ դրոշմուած ըլլալով Ծպիսկոպոսական Եկեղեցւոյ մէջ, այժմ կը փա-
փաթին անդամ Եւ զաւակ ըլլալ Հայց. Առաքելական Եկեղեցւոյ, շեշտելով ոռ
միայն դրոշմի խորհուրդին Ենթարկուին:

Մինչեւ 1965-ը, Նիւարքի ծուխին մէջ սովորութիւն եղած էր, Նման պարագա-
ներուն թէ՝ մկրտել Եւ թէ ալ դրոշմել: Այս պարագան ծանօթ է մեր ծխականնե-
րէն շատերուն:

Ինծի Համար դժուար պիտի չըլլար, Եկեղեցականաց ամառային Համագումարին
տուած Զեր թելադրութեան անսալով Նման պարագաներուն միայն դրոշմել, եթէ
մինչեւ անցեալ տարի մեր ծուխին մէջ մկրտութիւն Եւ դրոշմ կատարած չըլլայ-
ինք այսպիսի պարագաներուն:

Ինչպէս անցեալին Զեր ուշադրութեան հրաւիրած էի, կը փափաթիմ կրկին տեղե-
կացնել Զերդ Արբազնութեան թէ, իմացածիս Համաձայն, Նիւարքի Ծպիսկոպոսա-
կան Եկեղեցւոյ Ծպիսկ.ը, Երբ Հայց. Առաքել. Եկեղեցւոյ զաւակ մը փափաթի
Ծպիսկոպոսական Եկեղեցւոյ միանալ, չբաւականանալով Եւ անվաւեր Համարելով
մեր Եկեղեցւոյ դրոշմը, կրկին անգամ կը դրոշմէ, ըսելով ոռ դրոշմը Եահսկ.ի
մը Ճեղքով կը կատարուի:

Արդ՝ վերի երկու պարագաները յանձնելով Զերդ Սըբազնութեան բարձր նկատառ-
ման, կը խնդրեմ ուսենալ Ձեր ցուցմունքը եւ հրահանգը Դիւանեաններու մկո-
տութեան եւ դրոշմին նկատմամբ :

Սատչելով ի համբոյր Զեր Ս. Աջոյն

Զեր խոնարհ ծառան

Ժամանակ Մայ. Պապեան

Սամբոյ Քհնյ. Գուգուեան

**Գ Ի Ր Օ Ր Հ Ն Ո Ւ Թ Ե Ա Ն
ՍՈՒՐԱ ԱՍՏՈՒՄԱԾԱՌԻՆ ՀԱՅՑ. ԵԿԵՂԵՑԲՈՅ ՀԱՄԱՏՄԻՒՆ**

Խորապէս միմիթարուած կը զգանք որ Ս. Աստուածածին Հայց. Եկեղեցւոյ մեր համայնքը, որ նախ նուարքի մէջ որոշ կայք հաստատելէ յետոյ, ահա կ'ունենայ իր սեփական Եկեղեցին նիւ ճըրգի նահանգի Լիվինկսթըն քաղաքին մէջ:

Քառասունեւվեց տարուան ընթացքին Եկեղեցական-ազգային կեանքի բարգաւաճման սատարած այս համայնքը նախանձախնդրութեամբ եւ նուիրումով արթուն պահած է զիտակցութիւնը Հայ Եկեղեցւոյ ղաւանութեան, աւանդութեանց եւ մայրենի լեզւի ու մշակոյթի հանդէպ: Փոխուած են սերունդներ եւ պայմաններ, սակայն համայնքը Մշտապէս ջանադիր եղած է հոգեւոր շինութեան, եւ հաւաքական գործունէութեամբ արծանագրած է քարոյական եւ նիւթական առումով գնահատելի յաջողութիւններ:

Այդ ոգին աւելի ազդու կերպով արտայայտած կ'ըլլայ պատմութիւն ստեղծած այս համայնքը՝ ունենալով իր Եկեղեցւոյ նոր շէնքը որուն բարեզարդութիւնը աւարտած ըլլալով, օծումը պիտի կատարուի յառաջիկայ Մայիսին:

Մերրջերմ մաղթանքն է որ հոգեւոր հովիւ, ծիական խորհուրդ, Եկեղեցական ու ազգային մարմիններ եւ բարեպաշտ ժողովուրդը, համերաշխ գործակցութեամբ եւ ներդաշնակ միութեամբ շարունակեն աստուածահամոյ եւ հայանուէր իրենց աշխատանքները, առաւել եւս զարկ աւալու համար կրօնական, կրթական, ազգային եւ ընկերային կեանքի զօրացման ու արդիւնաւորութեան:

Կ'օրհնենք Եկեղեցւոյ գնման յանձնափումքը եւ բոլոր վարչականներն ու հաւաքացեալները, յորդորելով որ ամէնքը հոգեւոր հովիւին շուրջ բոլորուելով՝ պայծառացնեն Եկեղեցին, իրենց հոգեւոր կեանքով:

**ԹՈՐԳՈՄ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ
Առաջնորդ**

Փետրուար 14, 1974

Նիւ Եորք

ՅԱԻՆԵՐՁ ՊԻԾԻ ԱՊՐԻՆ ԵԿԵՂԵՑԻՆԵՐՆ ՀԱՅԿԱԿԱՆ

Ցնծացէք եւ ուրախ եղէք, հաւատացեալ զաւակներ մեր, զի դուք կոչուած էք Հայաստանեայց Սուրբ Եկեղեցին առաւել շէնցնելու եւ ծաղկեցնելու, Ամերիկայի Միացեալ Նահանգաց խաղաղ ու հիւրընկալ ափերուն վրայ :

Սիրելի զաւակներ մեր, հայոց լոյս հաւատքի եւ հայոց ստեղծուար հանճարին նուիրուած այս շինութիւնները մարմին պիտի առնեն եւ յաւերժ պիտի ապրին՝ շնորհիւ ձեր նուիրատուութիւններուն, շնորհիւ ձեր սրտի պարզեւին : Երանի ձեզ :

ՅՈՐԴՈՐ ԿԱՐԳԱՊԱՀՈՒԹԵԱՆ

Դուք բոլորդ պէտք է յարգէք սահմանները Եկեղեցական կարգ ու կանոնին, կարգապահութեան, բոլորդ համախումբ գտնուելով ձեր առաջնորդին եւ հոգեւոր հովիւներուն շուրջ : Ձեր թեմակալ առաջնորդը Ամենայն Հայոց Հայրապետութեան իշխանութեան եւ հեղինակութեան շարունակութիւնն է : Եւ անոր շուրջն է որ կ'ամրանայ եւ կը հաստատուի ձեր Եկեղեցական կեանքը, գործակցութեամբը հոգեւոր սպասաւորներուն, եւ ժողովուրդին կողմէ ընտրուած ներկայացուցիչներուն : Հետեւաբար, մեր մաղթանքն է եւ յորդորը, որ ներքին համերաշխ գործակցութիւնը եւ ներդաշնակ միութիւնը պահպանուի առաւել եւս :

Ն.Ս.Օ.Տ.Տ. ՎԱԶԳԻՆ Ա.
ՄՐԲԱՋՆԱԳՈՅՆ ԿԱԹՈՂԻԿՈՆ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ՅԱԽԵՐԺ ՊԻՏԻ ԱՊՐԻՆ ԵԿԵՂԵՑԻՆԵՐՆ ՀԱՅԿԱԿԱՆ

Ցնծացէք եւ ուրախ եղէք, հաւատացեալ զաւակներ մեր, զի դուք կոչուած էք Հայաստանեայց Սուրբ Եկեղեցին առաւել շէնցնելու եւ ծաղկեցնելու, Ամերիկայի Միացեալ նահանգաց խաղաղ ու հիւրընկալ ափերուն վրայ :

Սիրելի զաւակներ մեր, հայոց լոյս հաւատքի եւ հայոց ստեղծարար հանճարին նուիրուած այս շինութիւնները մարմին պիտի առնեն եւ յաւերժ պիտի ապրին՝ շնորհիւ ձեր նուիրատուութիւններուն, շնորհիւ ձեր սրտի պարզեւին : Երանի ձեզ :

ՅՈՐԴՈՐ ԿԱՐԳԱՊԱՀՈՒԹԵԱՆ

Դուք բոլորդ պէտք է յարգէք սահմանները Եկեղեցական կարգ ու կանոնին, կարգապահութեան, բոլորդ համախումբ գտնուելով ձեր առաջնորդին եւ հոգեւոր հովիւներուն շուրջ : Չեր թեմակալ առաջնորդը Ամենայն Հայոց Հայրապետութեան իշխանութեան եւ հեղինակութեան շարունակութիւնն է : Եւ անոր շուրջն է որ կ'ամրանայ եւ կը հաստատուի ձեր Եկեղեցական կեանքը, զործակցութեամբը հոգեւոր սպասաւորներուն, եւ ժողովուրդին կողմէ ընտրուած ներկայացուցիչներուն : Հետեւաբար, մեր մաղթանքն է եւ յորդորը, որ ներքին համերաշխ գործակցութիւնը եւ ներդաշնակ միութիւնը պահպանուի առաւել եւս :

Ն.Ս.Օ.Տ.Տ. ՎԱԶԳԵՆ Ա.
ՄՐԲԱՋՆԱԳՈՅՆ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅԻՆ ՀԱՅՈՑ

ՅԱՀԵՐԺ ՊԻՏԻ ԱՊՐԻՆ ԵԿԵՂԵՑԻՆԵՐՆ ՀԱՅԱԿԱՆ

Ցնծացէք եւ ուրախ նղէք, հաւատացեալ զաւակներ մեր, զի դուք կոչուած էք Հայաստանեայց Սուրբ Եկեղեցին առաւել շէնցնելու եւ ծաղկեցնելու, Ամերիկայի Միացեալ նահանգաց խաղաղ ու հիւրընկալ ափերուն վրայ :

Սիրելի զաւակներ մեր, հայոց լոյս հաւատքի եւ հայոց ստեղծարար հանճարին նուիրուած այս շինութիւնները մարմին պիտի առնեն եւ յաւերժ պիտի ապրին՝ շնորհիւ ձեր նուիրատուութիւններուն, շնորհիւ ձեր սրտի պարզեւին : Երանի ձեզ :

ՅՈՐԴՈՐ ԿԱՐԳԱՊԱՀՈՒԹԵԱՆ

Դուք բոլորդ պէտք է յարգէք սահմանները Եկեղեցական կարգ ու կանոնին, կարգապահութեան, բոլորդ համախումբ գտնուելով ձեր առաջնորդին եւ հոգեւոր հովիւներուն շուրջ : Ձեր թեմակալ առաջնորդը Ամենայն Հայոց Հայրապետութեան իշխանութեան եւ հեղինակութեան շարունակութիւնն է : Եւ անոր շուրջն է որ կ'ամրանայ եւ կը հաստատուի ձեր Եկեղեցական կեանքը, գործակցութեամբը հոգեւոր սպասաւորներուն, եւ ժողովուրդին կողմէ ընտրուած ներկայացուցիչներուն : Հետեւաբար, մեր մաղթանքն է եւ յորդորը, որ ներքին համերաշխ գործակցութիւնը եւ ներդաշնակ միութիւնը պահպանուի առաւել եւս :

Ն. Ս. Օ. Տ. Տ. ՎԱԶԳԵՆ Ա.
ՄՐԲԱՋՆԱԳՈՅՆ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ



ԱՐԱՋՆՈՐԴՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ

DIOCESE OF THE ARMENIAN CHURCH OF AMERICA, 630 SECOND AVENUE, NEW YORK, N. Y. 10016 212 686-0710

ARCHBISHOP TORKOM MANDOOSIAN, PRIMATE

Մայիս 31, 1977

Հոգեցնորդ
Տ. Յուսիկ Ա. Վրդ. Պաշտամուն
Հովհաննես Ա. Խաչումածին Շինուազրություն
Խախուազ Ժաման Խորհուրդի
Լիվինեսթըն.

Միջնալի Հայր Յուսիկ,

Նորոգ հանգուցեալ Հայկ Գավուքնեան 102 տարեկան պիտի ըլլար այս տարւան Օգոստոսին: Ծուրջ բառասունը հինգ տարիներ յօգուտ իր ազգին եւ եկեղեցին կատարած իր դրական ծրագրումներուն, սրտեռանդն ջանքերուն եւ իրազործումներուն ամենէն զեղեցիկ կոթողը պիտի մնայ Մայր Տաճարի, Մշակութային Կեդրոնի եւ Առաջնորդարանի համալիրի կառուցումը նիւ նորք քաղաքի սրտին վրայ:

Լուսահոգի Հայկ Գավուքնեան իր կեանքը մինչեւ վերջին պահը մտածեց եւ աշխատեցաւ կերպն ու միջոցը գտնել Մայր Տաճարի պարտուց բարձման: Այս մեծ բարերարին շունչը դժբախտաբար յանկարծ սպառեցաւ, առանց լրացնել կարենալու իր այդ առաջադրութիւնը:

Իր մեկնումով ծգուած այս խոշոր բացը կամրջելու համար Առաջնորդարանէն ներս նոր ծրագրումներով զբաղեցան Հայկ Գավուքնեանի անձն ու ոգին յարատեւ վառ պահելու նախանձախնդիր բարեկամներ: Անոնք, յետ լուրջ խորհրդածութեան, յառաջացուցին Կեդրոնական Գործադիր Մարմին մը, որուն կազմի անդամներն են.

Տիար Տատուր Տատուրեան

Ատենապետ

Տիար Սուրէն Փէսնեան

Գանձապահ

Տիար Եղուարդ Պաշեան

Բ. Գանձապահ

Տ. Գառնիկ Քնն. Հալլանեան

Քարտուղար

Տ. Առնակ Քնն. Գասպարեան

Բ. Քարտուղար

Տիար Բիշըրտ Գ. Կրէկըրի

Օրինական Խորհրդատու

Կեդրոնական Գործադիր Մարմինը կազմեց Հայկ Գավուքնեանի ոգեկոչման կարգացոյց մը, որուն գործադրութեան ընթացք պիտի տրուի սոյն թուականէն մինչեւ Օգոստոս 20, որ ծննդեան թուականն է ողբացեալ Հայկ Գավուքնեանի:

Յանձնախումբի նպատակն է ապահովել 102 անձեր որոնք տրամադիր ըլլան իւրաքանչիւրը 1000 --մէկ հազար-- տոլար նուիրել, եւ գտնել 1000 անձեր որոնցմէ իւրաքանչիւրը 102 --հարիւր երկու-- տոլար յանձն առնէ նուիրել Հայկ Գավուքճեանի յիշատակին:

Մնացեալ պարտքի գումարն է 750,000 --եօթը հարիւր յիսուն-- հազար տոլար, որուն դիմաց դրամատան մէջ ունինք միայն 150,000 --հարիւր յիսուն հազար-- տոլար՝ որ մէկ տարուան վճարումն է:

Սոյն նպատակին կարեւորութիւնը նկատի ունենալով կը յանձնարարենք.

1. Հոգեհանգստեան Պաշտօն կատարել մեր թեմի եկեղեցիներուն մէջ Հայկ Գավուքճեանի հոգւոյն համար, անոր մահուան քառասունքին առթիւ, Ցունիս 5էն մինչեւ Ցունիս 26, ըստ յարմարութեան:

2. Կազմել տեղական յանձնախումբ մը հետապնդելու համար առաջադրուած նպատակը: Յանձնախումբի անդամներուն անունները հանեցէք մեզի դրկել մինչեւ Ցունիս 16: Եթէ փափաքին, համայնքներ կրնան քառասունքի Հոգեհանգստէն յետոյ մատադի նաշ հրամցնել ներկաներուն, եւ այդ առիթով բացատրել նպատակը եւ ծրագիրը կազմուած յանձնախումբին: Նուէրները պէտք է Առաջնորդարան դրկուին նուիրատուներու հասցէներով:

3. Չեր համայնքին մէջ հանեցէք գտնել 60 անձեր, որոնցմէ իւրաքանչիւրը փափաքի 102-ական տոլար նուիրել Հայկ Գավուքճեանի յիշատակին, Ս. Վարդան Մայր Տաճարի պարտուց բարձման համար:

Լիայոյս ենք որ Կեդրոնական Գործադիր Մարմնի այս սկզբնական աշխատանքներուն սատար հանդիսանալու համար, մեր հոգեւոր հովիւներն ու ծխական խորհուրդները բարենախանծութեամբ պիտի կատարեն յիշեալ ոգեկոչումները եւ պիտի անպայման արդիւնաւորեն նուիրահաւաքման գործը: Այսպէսով լաւագոյնս արտայայտած պիտի ըլլանք մեր սէրը ``Համայնքի նահապետ`` պատուանունով նաշցըւած Հայկ Գավուքճեանին, որուն հոգին երկնային լոյսերու մէջէն կը հետեւի մեր համադրեալ ջանքերուն:

Սիրոյ ողջունիւ

Բայց յի Ակքիմաւոյք
ԹՈՐՃՈՒՄ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՒ
Առաջնորդ



ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ

DIOCESE OF THE ARMENIAN CHURCH OF AMERICA, 630 SECOND AVENUE, NEW YORK, N.Y. 10016-4885 212 686-0710

Archbishop Torkom Manoogian, Primate

Փետրուար 22, 1989

Հոգեշնորհ

Տ. Յուսիկ Ռ. Վրդ. Պաղտասեան

Հովհան Ս. Աստուածածին Եկեղեցւոյ

Նախագահ Ծխական Խորհուրդի

Լիվիմկաթըն.

Սիրելի Հայր Յուսիկ,

Մօռ երկու ամիս առաջ Առաջնորդ Սրբազն Հայրը զիս Ս. Վարդան Մայր Տաճարի լուսարարապետ նշանակեց:

Սուրբ Վարդան Մայր Տաճարը հայկական կառուցուածքով ու ոճով շինուած, ինչպէս Թէքէնան կ'ըսէ. «Պարզ ու խորոնկ, մութ ու լոյս» տաքուկ մթնոլորտով սրբավայր մըն է: Օտարեն երբ եկեղեցի կը մտնեն՝ հայկական ճարտարապետութեան ու մեր եկեղեցւոյ հմայիչ մթնոլորտին վրայ կը հիանան: Ս. Վարդան Մայր Տաճարը սրբազն կոթող մըն է, որմով մենք ազգովին պէտք է հապարտ ըլլանք եւ անոր վրայ գործուրանք:

Անշուշտ Մայր տաճարի ճարտարապետութիւնն ու մթնոլորտը բաւարար չեն ըսելու համար որ Ս. Վարդան Մայր Տաճարը կատարեալ է: Սակայն կարելի է ըսել՝ նեկայանալի ու վայելու է: Բայց եւ այնպէս կրնայ աւելի լաւ, աւելի վայելու եւ աւելի ներկայանալի ըլլալ: Ինչպէս գիտէք բարելաւումի համար սահման չկայ:

Աւելի վայելու դառնալու ազդակներէն մին է ծէսին հետ կապուած սպասներու կանոնաւորութիւնն ու ներդաշնակութիւնը:

Քանից ներկայ եղած եմ Մայր Տաճարին մէջ տեղի ունեցած հանդիսաւոր թափօրմերուն. միշտ թափօրմերու համար մեր եկեղեցական եղբայրներէն խնդրուած է որ իրենց շորջառները

Բետերնին բերեն: Շատեր զանազան պատճառներով չեն կրցած' բերել եւ ստիպուած ամոնց տրամադրուած են Մայր Տաճարի շուրջառները: Սակայն այդ շուրջառները բաւարար չեն եղած: Ինքս Ս. Քաղաք Երուսաղէմ ուսանած ու ձեռնադրուած ըլլալով՝ ականատես եղած եմ թափօրներու ընթացքին միօրինակ եւ միաձեւ շուրջառներու ներդաշնակ տեսքին: Ինչ որ Ս. Քաղաքի մէջ տեսած եմ՝ կ'ուզես նաև Ս. Վարդան Մայր Տաճարին մէջ ի գործ դնել:

Որոշած եմ 30 հատ միաձեւ եւ միօրինակ շուրջառներ կարել տալ Մայր Տաճարէն ներս տեղի ունեցող արարողութիւններու եւ թափօրներու ընթացքին գործածելու համար, որպէս զի թափօրները առաւել եւս վայելու ու ներկայանալի ըլլան:

Սոյն ծրագրի գործադրութեան համար մեր ժողովուրդի եւ ձեր եկեղեցւոյ բարոյակամ ու Ախլական օժանդակութեան կարիքը ունիմ: Սոյն գրութեամբս պիտի խնդրէի որ ձեր եկեղեցին ստանձներ շուրջառ մը կարելու ծախսը՝ որ 350 (Երեք հարիւր լիսուն) տոլար է: Վստահ եղէք որ ձեր Ախլական օժանդակութիւնը մեծապէս պիտի գնահատուի:

Ձեր արեւշատութեան ու յաջողութեան բարի մաղթանքներով,

Աղօթակից

Բարգէն Վրդ. Անուշեան
Լուսարարապէտ Ս. Վարդան Մայր Տաճարի